| 5134 | -Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | | | | 300,00 | | 300,00 | | | |
| 5200 | 1.2 ՊԱՇԱՐՆԵՐ (տող5211+տող5221+տող5231+ տող5241) | x | | | | | | | | | |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+ տող6400) | x | 0,00 | 0,00 | 0,00 | -3000,00 | 0,00 | -3000,00 | -2861,90 | 0,00 | -2861,90 |
| 6100 | ԻՐԱՑՈՒՄԻՑ (տող6110+տող6120+տող6130) | x | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | 0,00 | -1122,60 | 0,00 | -1122,60 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | այդ թվում | | | | | | | | | | |
| 6110 | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8111 | | | | | | | | | |
| 6120 | ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8121 | | | | | | | | | |
| 6130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8131 | | | | | | | -1122,60 | | -1122,60 |
| 6300 | ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (ՏՈՂ 6310) | x | | | | | | | | | |
| | այդ թվում | | | | | | | | | | |
| 6310 | ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8311 | | | | | | | | | |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝ (տող6410+տող6420+տող6430+տող6440) | x | | | | -3000,00 | 0,00 | -3000,00 | -1739,30 | 0,00 | -1739,30 |
| | այդ թվում | | | | | | | | | | |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8411 | | | | -3000,00 | | -3000,00 | -1739,30 | | -1739,30 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՇԵՆՔ 26 kaputan.kotayq@mta.gov.am*


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 29-Ն**
**12 Հուլիս 2017թ.**

## ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Սահմանել Կապուտան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՍԱՖԱՐՅԱՆ*

Հավելված

Կապուտան համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 12-ի
N 29-Ն որոշման

# ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանվում է Կապուտան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) տեղադրելու կարգն ու պայմանները: Կանոնները ընդունվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

2. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում:

Արտաքին գովազդ են համարվում «Կապուտան համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման չափորոշիչներով» (այսուհետ՝ Չափորոշիչներ) սահմանված մակերեսից ավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:

3. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների վրա,որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար ՀՀ Հողային օրենսգրքով սահմանված կարգով Կապուտան համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին)՝ միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:

5. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, Չափորոշիչների և Կանոնների պահանջներին:

## ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6. Թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն և Կանոններով սահմանված կարգով տրվում է Կապուտան համայնքի ղեկավարի կողմից՝ Ձև 1-ով սահմանված ձևաչափով:

7. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Կապուտան համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

8. Կապուտանի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում Կապուտան համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:

9. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Կապուտան համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անցկացնում է մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

10. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է Կապուտանի համայնքապետարանի թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային ծառայողի մոտ:

11. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին.

2) խախտվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուղարծը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

12. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

13. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Կապանի համայնքապետարանին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Կապանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ:

14. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Չափորոշիչների, Կանոնների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:

15. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Կապանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան հարցերով զբաղվող մասնագետի հետ՝ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

16. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

17. Գովազդի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղադրման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

18. Կանոններով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կապան համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Կապանի համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Կապան համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի

դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

21. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն Կապուտան համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

22.Հողօգտագործման վճարի չափը չի կարող պակաս լինել տվյալ հողի հարկի դրույքաչափից:

23. Կանոններին համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Կապուտան համայնքի բյուջե:

24. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անթարենխիղճ գովազդ թույլ տալու դեպքում Կապուտան համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):

25. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղադրման կապակցությամբ Կապուտան համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:

26. Կապուտան համայնքում արտաքին գովազդի տեղադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով և գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Կապուտան համայնքի ղեկավարը:

27. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 kaputan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 30-Ն**
**12 Հուլիս 2017թ.**

## ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Սահմանել Կապուտան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված
Կապուտան համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 19-ի
№ 30-Ն որոշման

**Կապուտան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոններ**

1.Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:

2.Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը հանրային սննդի օբյեկտի կողմից առաջարկվում է սպառողին՝ մասնաբաժնի և գնի նշումով:

3.Հանրային սննդի կազմակերպման սրահը պետք է հատուկ կահավորված լինի նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:

4.Մուտքի մոտ պետք է փակցված լինի ցուցանակ, որտեղ նշվում են ձեռնարկության անվանումը, տիպը, կազմակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:

5.Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:

6.Խոհարարն ու հրուշակագործը պետք է ունենան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ:

7.Սպասարկող անձնակազմի անդամները պետք է ունենան սանիտարական հագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված ձեռնարկության կնիքով:

8.Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

9.Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

10.Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

11. Ժամը 24-00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտներում արգելվում է ակնհայտ 16 տարին չլրացած անձանց մուտքը :

13. Ժամը 24-00-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտները պետք է գտնվեն բնակարաններից առնվազն 50 մ հեռու:

14. Ժամը 24-$^{00}$-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտների սրահի պատերը և պատուհանները պետք է ձայնամեկուսացված լինեն, որպեսզի ներսի աղմուկը չխաթարի շրջակա տարածքում բնակվող բնակիչների դժգոհությունը, ինչպես նաև ձեռնարկեն համապատասխան միջոցներ ժամը 23:00-7:00-ն օբյեկտի գործունեության հետ կապված նաև օբյեկտից դուրս լռության պահպանման ուղղությամբ:

15. Ժամը 24-$^{00}$-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտները պետք ունենան պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության բաժնի կամ անվտանգություն իրականացնող լիցենզավորված կազմակերպության հետ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 kaputan.kotayq@mta.gov.am


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 31**
**12 Հուլիս 2017թ.**

## ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ.-Ի ՀԱՄԱՐ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետին համապատասխան՝ ***համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Կապուտան համայնքի հողային հաշվեկշիռը 2017թ.-ի համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՍԱՖԱՐՅԱՆ*

Ձև N 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 12/07/2017թ.)

Մարզ: Կոտայք (անվանում) — 7 (կոդ)

Համայնք: Կապուտան (անվանում) — 562 (կոդ)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակությունը | Հողատեսք, գործառնական նշանակությունը | Կոդի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | Սեփականության սուբյեկտներ — համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: 5 | համայնքային: 6 | համայնքային: 7 | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: 9 | պետական: 10 | պետական: 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ա | բ | գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական նշանակության | վարելահող | | 1078,74 | 1031,33 | | 47,41 | | | 47,41 | | | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, | | | | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 252,94 | 252,43 | | 0,51 | | | 0,51 | | | | |
| 1.4 | | արոտ | | 1751,72 | 27,82 | | 1667,04 | | 323,67 | 1343,37 | 56,86 | | 13,59 | 43,27 |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 96,77 | 0,31 | | 96,46 | | | 96,46 | | | | |
| 1 | | Ընդամենը | | 3180,17 | 1311,89 | | 1811,42 | | 323,67 | 1487,75 | 56,86 | | 13,59 | 43,27 |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի | | 53,21 | 53,21 | | | | | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ | | 53,21 | 53,21 | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ա | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 1,10 | 0,10 | | 0,36 | | | 0,36 | 0,64 | | | 0,64 |
| 2.3 | | խառը | | 9,12 | | | 9,12 | | | 9,12 | | | | |
| 2.4 | | ընդհանուր | | 1,32 | | | 1,32 | | | 1,32 | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | | | | | | | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 64,75 | 53,31 | | 10,80 | | | 10,80 | 0,64 | | | 0,64 |
| 3.1 | 3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման | արդյունաբերական | | 4,52 | 0,70 | | 3,82 | | 1,24 | 2,58 | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական | | 0,06 | | | 0,06 | | | 0,06 | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | 19,29 | | | 14,61 | | 14,61 | | 4,68 | | 4,68 | |
| 3.4 | | ընդերք | | | | | | | | | | | | |
| 3 | | Ընդամենը | | 23,87 | 0,70 | | 18,49 | | 15,85 | 2,64 | 4,68 | | 4,68 | |
| 4.1 | 4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի | էներգետիկայի | | 0,05 | | | 0,05 | | | 0,05 | | | | |
| 4.2 | | կապի | | 5,66 | | | | | | | 5,66 | | | 5,66 |
| 4.3 | | տրանսպորտի | | 0,08 | | | 0,08 | | | 0,08 | | | | |
| 4.4 | | կոմունալ | | | | | | | | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 5,79 | | | 0,13 | | | 0,13 | 5,66 | | | 5,66 |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցի | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | 20,07 | | | 0,24 | | | 0,24 | 19,83 | | | 19,83 |
| 5.4 | | պատմական և | | | | | | | | | | | | |
| 5 | | Ընդամենը | | 20,07 | | | 0,24 | | | 0,24 | 19,83 | | | 19,83 |
| 6 | 6. Հատուկ նշանակության | Ընդամենը | | 4,48 | | | | | | | 4,48 | | 2,79 | 1,69 |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 65,62 | | | | | | | 65,62 | | | 65,62 |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | 65,62 | | | | | | | 65,62 | | | 65,62 |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | | | | | | | | | | | |
| 8.2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | |
| 8.3 | | լճեր | | 1,67 | | | 1,67 | | | 1,67 | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | | | | | | | | | | | |
| 8.5 | | հիդրոտեխն. և | | 0,04 | | | 0,04 | | | 0,04 | | | | |
| 8 | | Ընդամենը | | 1,71 | | | 1,71 | | | 1,71 | | | | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 3366,46 | 1365,90 | | 1842,79 | | 339,52 | 1503,27 | 157,77 | | 21,06 | 136,71 |

Ձև 22ա

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ռոռգվող հողերի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների)

Մարզ* Կոտայք (անվանումը) 7 (կոդ)

Համայնք* Կապուտան (անվանումը) 562 (կոդ)

| NN | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը, հողատեսքը | Տող NN | Ընդամենը ռոռգվող հողեր Ւ2+3+4+5+6 | Սեփականության սուբյեկտը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ պետական սեփական | ՀՀ համայնքային սեփական | Քաղաքացիների | Իրավաբանական անձինք | Օտարերկրյա քաղաքացիների |
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1,1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | | | | | | |
| 1,2 | | բազմամյա տնկարկներ, որից | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում* պտղատու այգի | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1,3 | | խոտհարք | | | | | | | |
| 1,4 | | արոտ | | | | | | | |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | | | | | | |
| 2,1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2,2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2,3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | | | | | | |
| 3 | 3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7,2 | | թփուտ | | | | | | | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | |
| 7,4 | | խոտհարք | | | | | | | |
| 7,5 | | արոտ | | | | | | | |
| 7,6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6) | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՌՈՌԳՎՈՂ ՀՈՂԵՐ Ւ1+2+3+4+5+6+7+8+9* | | | | | | | | | |

Համայնքի ղեկավար՝ /ստորագրություն, կնիք/ /ազգանունը/ /կազմակերպություն/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 kaputan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 32-Ն**

**12 Հուլիս 2017թ.**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և սահմանել մեկնարկային գներ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՍԱՖԱՐՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ

# Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդ վաճառք

| հհ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիր | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Մեկնարկային գին ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՈՒԿԾ 4-ՐԴ ԿԱՐԳ | գ.Կապուտան | 07-036-0126-0080 | 3,44886 | գյուղատնտեսական | վարելահող | 1345000 |
| 2 | ՈՒԿԾ 3-ՐԴ ԿԱՐԳ | գ.Կապուտան | 07-036-0120-0354 | 0,80337 | գյուղատնտեսական | վարելահող | 322000 |
| 3 | ՈՒԿԾ 4-ՐԴ ԿԱՐԳ | գ.Կապուտան | 07-036-0126-0072 | 0,9819 | գյուղատնտեսական | վարելահող | 382000 |
| 4 | ՈՒԿԾ 4-ՐԴ ԿԱՐԳ | գ.Կապուտան | 07-036-0126-0087 | 0,99917 | գյուղատնտեսական | վարելահող | 742000 |
| | | գ.Կապուտան | 07-036-0126-0086 | 0,90348 | գյուղատնտեսական | | |

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Մուրադյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 kaputan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 33

12 Հուլիս 2017թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊՈՒՏԱՆ ՀԻԴՐՈՖՈՆԻՔՍ>> ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, ***համայնքի ավագանի որոշում է՝***

*Ելնելով* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքի (այսուհետ նաև՝ Կապուտան համայնք) տնտեսական շահերից,

*Հիմք ընդունելով*. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Նշան Միհրանի Սաֆարյանի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքում գյուղատնտեսական և անասնապահական զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով՝ <<ԿԱՊՈՒՏԱՆ ՀԻԴՐՈՖՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հիմնադրման ձևով մասնակցելու մասին,

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքում <<ԿԱՊՈՒՏԱՆ ՀԻԴՐՈՖՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում 15 (տասնհինգ) տոկոս մասնակցելու կամ 15 (տասնհինգ) տոկոս բաժնեմասը ձեռք բերելու՝ հիմնադրման նախապատրաստական աշխատանքներն իրականացնող և նախաձեռնող խմբի հետ ձեռք բերված նախնական համաձայնությունը, ***համայնքի ավագանի որոշում է՝***

1. Մասնակցել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքում գյուղատնտեսական և անասնապահական զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով հիմնադրվող <<ԿԱՊՈՒՏԱՆ ՀԻԴՐՈՖՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ 15 (տասնհինգ)տոկոս բաժնեմասով կամ մասնակցության ուժով:
   Տալ համաձայնություն, որպեսզի Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նշան Միհրանի Սաֆարյանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքի անունից մասնակցի և ներկայացնի Կապուտան համայնքի շահերը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքում գյուղատնտեսական և անասնապահական զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով հիմնադրվող <<ԿԱՊՈՒՏԱՆ ՀԻԴՐՈՖՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր ժողովին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. ԱՎԱԳՅԱՆ ԷԴՎԱՐԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ
3. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՍԱՖԱՐՅԱՆ*